

Կազմված է «20» « 12 » 2019թ.
Բաղկացած է 10(Կ...) թերթից
Ընդամենը՝ 2 (երկու) օրինակ:
Օրինակ 1

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է՝

Արցախի հեղափոխական
կուսակցության 20.12.2019թ. կայացած
հիմնադիր համագումարի որոշմամբ
/թիվ 01 արձանագրություն/

Նախագահ՝ Քանտ Ա. Օսիպյան

ԳՐԱՆՑՎԱԾ Է՝

ԱՀ արդարադատության նախարարության
աշխատակազմի իրավաբանական անձանց
պետական ռեգիստրի գործակալության
կենտրոնական մարմնի կողմից

Գրանցման ամսաթիվ՝ «20» «01» 2020 թ.

Գրանցման համար 443.172.1110547
թվ 22 90046287

Գործակալության պետ՝



Գ.Մարսիմովա

ԱՐՑԱԽԻ ՀԵՂԱՓՈՒՄԱԿԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ
ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ք. Ստեփանակերտ, 2019թ.

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. Արցախի հեղափոխական կուսակցությունը (այսուհետ նաև՝ Կուսակցություն) անհատական անդամության վրա ստեղծված հասարակական միավորում է, որը օրինականության, կամավորության, իրավահավասարության և հրապարակայնության սկզբունքների հիման վրա համախմբում է ԱՀ քաղաքացիներին՝ պետության և հասարակության քաղաքական կյանքին մասնակցելու նպատակով:

1.2. Կուսակցությունը գործում է Արցախի Հանրապետության Սահմանադրության, ԱՀ օրենսդրության, ԱՀ միջազգային պայմանագրերի, «Կուսակցությունների մասին» ԱՀ օրենքի, ենթաօրենսդրական նորմատիվ իրավական այլ ակտերի և սույն կանոնադրության հիման վրա:

1.3. Կուսակցությունը գործում է Արցախի Հանրապետության ողջ տարածքում, ունի տարածքային ստորաբաժանումներ Արցախի շրջաններում, այդ թվում՝ Ատեփանակերտում: Կուսակցության տարածքային ստորաբաժանումները ստեղծվում են տարածքային հատկանիշներով: Այլ պետություններում Կուսակցությունը կարող է ունենալ ներկայացուցչություններ:

1.4. Կուսակցությունը մասնակցում է ԱՀ տարածքում անցկացվող նախագահական, Ազգային ժողովի, տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների, հանրաքվեների, օրենքով չարգելվող զանգվածային և այլ միջոցառումների: Կուսակցությունը կարող է օրենքով սահմանված կարգով հիմնադրել զանգվածային լրատվական միջոցներ:

1.5. Կուսակցությունն ունի սպիտակ գույնի դրոշ, որի կենտրոնում պատկերված է Կուսակցության խորհրդանիշը:

1.6. Կուսակցությունն ունի խորհրդանիշ, որի կենտրոնական մասում պատկերված է Հայ ժողովրդի և պետականության խորհրդանիշ հանդիսացող Մասիս սարը: Առջևում պատկերված է խաչ, որը թրի տեսք ունի և խորհրդանշում է հայ ժողովրդի հավատքն ու հայոց բանակի անկոտրում ուժը: Խորհրդանիշի աջ հատվածում պատկերված է «Մենք ենք մեր սարերը» հուշակոթողը, իսկ վերևի և ներքևի հատվածներում գրված է՝ ԱՐՑԱԽԻ ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ: Չախ մասում կուսակցության հապավումն է՝ ԱրՀԿ:

1.7. Կուսակցությունը պետական գրանցման պահից ձեռք է բերում ոչ առևտրային իրավաբանական անձի կարգավիճակ: Կուսակցությունն ունի կլոր կնիք, դրոշմակնիք, հաշվարկային և այլ հաշիվներ ԱՀ, ՀՀ բանկերում՝ դրամով ու արտարժույթով, և այլ ռեկվիզիտներ:

1.8. Կուսակցության անվանումն է.

հայերեն՝ Արցախի հեղափոխական կուսակցություն, (հապավումը՝ ԱրՀԿ),

ռուսերեն՝ Революционная партия Арцаха (հապավումը՝ РПА),

անգլերեն՝ Revolutionary Party of Artsakh (հապավումը՝ RPA):

1.9. Կուսակցության մշտապես գործող ղեկավար մարմնի գտնվելու վայրի հասցեն է. ԱՀ ք. Ստեփանակերտ, Պարսեղովի փող. 4 բն. 18:

2. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

2.1. Կուսակցության նպատակներն ու խնդիրներն են՝ քրիստոնեական, ժողովրդավարական, սոցիալական ու իրավական պետության կերտումը, որը հիմնված կլինի օրինականության և օրենքի գերակայության, ինչպես նաև ավանդական արժեքների պահպանման վրա:

2.2. Հանրային կյանքի կազմակերպման հայեցակարգի վերաբերյալ Կուսակցության մոտեցումները, նրա գործունեության հիմնական սկզբունքները, նպատակները, խնդիրները,